Ռ. Լ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ. Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987 թ., 240 էջ։

Ռ. Լ. Մանասերյանի այս աշխատությունը բաղկացած է ներածությունից, սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների տեսությունից, վեց գլխից, վերջաբանից։

Տիգրան II-ի հայկական պետության պատմությունն ուսումնասիրելիս շատ կարևոր է որոշել նրա արտաքին քաղաքական գլխավոր ակցիաների ժամանակագրական ստուգված հաջորդականությունը, Տիգրանի հելլենիստական տերության կազմավորման պրոցեսը ու նրա սոցիալ-տնտեսական հիմքերը, Տիգրանի օրոք հայկական պետության խաղացած դերը հելլենիստական Արևելքի ճակատագրում, հարցեր, որոնց պատասխանները մենք գտնում ենք գրախոսվող աշխատության մեջ։

Տիգրան II-ի տերությունը պատմական թատեարևմում հանդես եկավ այն ժամանակ, երբ Մերձավոր Արևելքում սկսեց որոշակիորեն ուրվագծվել արևմուտքից ու արևելքից սպառնացող վտանգը՝ ի դեմս հռոմեական լեգեոնների ու պարթև հեծյալների։ Երկու դերհզոր ուժերի՝ Հռոմի և Պարթևստանի առաջն առնելու միակ, առաջին ու վերջին փորձը կապված է Տիգրան II-ի տերության, Տիգրանի վարած արտաքին քաղաքականության հետ։ Այս հանգամանքը փայլուն կերպով ցույց է տրված գրախոսվող աշխատության մեջ։ Համաձայն հեղինակի ելակետային տեսակետի, Տիգրանը դեռևս մ. թ. ա. 93 թ. իրեն խնդիր է դրել կանխել Մերձավոր Արևելքում հռոմեական և պարթևական աշխարհակալությունների՝ հայոց թագավորության անկախության համար վտանգավոր հաստատումը։ Այս նպատակը Տիգրանը փորձեց իրագործել հզոր տերության մեջ հելլենիստական Արևելքի իշխող դասակարգերը համախմբելու ճանապարհով։

Աշխատության սկզբում խոսվում է Հռոմի էքսպանսիայի դեմ Կապադովկիայում 93—91 թթ. Տիգրանի վարած պայքարի և մ. թ. ա. 92 թ. հռոմեա-պարթևական բանակցությունների մասին (էջ 31—58)։

Այստեղ համոզիչ կերպով քննված են Հռոմի առաջխաղացման հանգամանքների ու պոնտական տերության նպատակների հետ շաղկապվող այն դրդապատճառները, որոնք Տիգրանին ստիպեցին Սուրը միացնելուց հետո անցնել Եփրատը և միջամտել հարևան Կապադովկիայի գործերին։ Հայկական, պոնտական և հռոմեական դրածոների հերթափոխը լավ է բացահայտում Կապադովկիայով շահագրգռված հարևանների մղումները։ Մ. թ. ա. 92 թ. Կապադովկիայում հայերի դեմ պրոպրետոր Սուլլայի տարած հաղթանակներին հաջորդեցին նրա հանդիպումները պարթևական տերության ներկայացուցիչների հետ Եփրատի ափին, որով հիմքեր դրվեցին շուրջ մեկ հազարամյակ տևող հռոմեա-պարթևական ու բյուզանդա-սասանյան առճակատմանը Առաջավոր Ասիայում, որի առաջին զոհը լինելու էր Հայաստանը։ Ինչպես միշտ նկատում է հեղինակը, գահընկեց անելով Կապադովկիայում հռոմեասեր Արիոբարզանին և նրա տեղը դնելով Գորդիոսին, Տիգրանը իր առաջին փորձն էր կատարում կասեցնելու հռոմեական առաջխաղացումը դեպի Արևելք՝ իր ու Հռոմի միջև մի բուֆերային պետություն ստեղծելու միտումով։ Հռոմի և Պարթևստանի միջև կնքվող ընդհանուր համաձայնագիրը և պարթևական կողմի առաջարկը Հռոմին Հայաստանի դեմ սիմմախիա՝ ռազմական դաշինք կնքելու մասին ավելի քան պարզ էր դարձնում հայկական պետությանը սպառնացող նոր վտանգը (էջ 46), ուստի կապադովկյան դեպքերին հաջորդող Տիգրանի մյուս քայլը պետք է Պարթևստանի սանձահարումը լիներ, որը նա մեծ հաջողությամբ իրագործեց 86—85 թթ. ռազմական կամպանիաների ընթացքում։

Աշխատության ծանրակշիռ, հիմնական մասերից մեկն են կազմում Տիգրան II-ի տերության կազմավորման պրոցեսին նվիրված էջերը (էջ 59—116)։ Հռոմեական վտանգի առաջն առնելու միակ միջոցը նրա ճանապարհին հզոր ռազմաքաղաքական պատնեշի ստեղծումն էր։ Տիգրանի կողմից կառուցվող այդ պատնեշի ավարտական քայլը հայկական տերության կազմի մեջ արևելամիջերկրական մի շարք երկրների ներգրավումն էր։ Մ. թ. ա. 83 թ. Տիգրանը իրեն ենթարկեց Ասորիքը, Փյունիկիան և Կիլիկիան։ Ասորիքում Տիգրանի հաստատմանը նախորդած ժամանակաշրջանում Ասորիքի գահի տարբեր հավակնորդների միջև ծավալված անդադրում կռիվների հետևանքով երկրում ծայր առած քաղաքական անմխիթար վիճակը նկարագրելուց հետո հեղինակը անցնում է հելլենիստական Արևելքի սոցիալ-տնտեսական հարցերի քննարկմանը և հանգում այն եզրակացության, որ հայկական ու սելևկյան-սիրիական վերնախավի միջև կնքվել է հատուկ դաշինք, որը փաստորեն հանգել է Ասորիքի սելևկյան և Տիգրանի հայկական պետությունների ունիային։ Այս տեսակետից շատ կարևոր է Ասորիքի սելևկյան քաղաքների դերի բացահայտումը միավորման այս պրոցեսում։

Հեղինակը իրավացիորեն ուշադրություն է դարձնում Ասորիքի քաղաքների միջև դրսևորված, եզակի նշանակություն ունեցող համախո-

հության՝ տոմոնոյայի մասին Ստրաբոնի բերած վկայության վրա (էջ 68)։ Այն ինչ-որ բարոյաէթիկական հասկացություն չէր, այլ քաղաքների միջև գոյություն ունեցող իրական դաշինք, որը ենթադրում է ընդհանուր ժողովներ և համընդհանուր որոշումներ։ Բերված նյութից երևում է, որ կենտրոնական իշխանության թուլացման պայմաններում քաղաքները ձգտում էին համախմբման և երբ պատմիչ Հուստինոսը ասում է, որ Ասորիքի «ժողովուրդը» (populus-ը) դիմել է Տիգրանին ստանձնելու սելևկյան թագավորությունը, նա նկատի ունի քաղաքների համայնքաքաղաքացիական համախմբված կոլեկտիվները (էջ 72—73)։ Աշխատության մեջ ցույց է տրված, թե ինչու ասորիները գերադասեցին Տիգրանի Հայաստանը Եգիպտոսից, Հռոմից, Պարթևստանից, Պոնտոսից և թե՝ հետևապես ինչու այս ունիան ձեռնտու էր հավասարապես թե՛ մեկ և թե՛ մյուս թագավորությանը։

Այս տեսակետից հատկապես ուսանելի են Տիգրանի և Ասորիքի սելևկյան քաղաքների միջև հաստատված հարաբերությունները։ Տվյալներ կան, որոնք վկայում են արքայի բարյացակամության մասին քաղաքների նկատմամբ և քաղաքների նվիրվածության մասին՝ արքայի նկատմամբ։ Արքան քաղաքներին շնորհում է «աղատություն», ապաստանի կամ անձեռնմխելիության իրավունք (ասիլիա), սրբազան կոչվելու իրավունք (ֆինանսական իմունիտետ)։

Հայաստանը և Ասորիքը դառնում են բնական դաշնակիցներ Հռոմի և պարթևների դեմ մղվող պայքարում։ Սակայն մ. թ. ա. 70-ական թթ. երկրորդ կեսից այնտեղ գլուխ են բարձրացնում ընդդիմադիր ուժերը, որոնց համար Տիգրանի քաղաքական լուծումներն ընդունելի չէին։ Հայաստանում ապստամբություն է բարձրացնում նրա երիտասարդ որդի Զարեհը։ Ասորիքում ապստամբում են հարավի քաղաքները Կլեոպատրա-Սելենե թագուհու գլխավորությամբ։ Այս հարցը հեղինակը կապակցում է անտիկ դարաշրջանը լուսաբանող պատմագիտական երկերում հանդիպող Տիգրան II-ի չեզոքության հարցին Միհրդատյան երրորդ պատերազմի ընթացքում (73—71 թթ.)։

Ինչպես հայտնի է, Տիգրան II-ի արդի քննադատները և առաջին հերթին Թեոդոր Ռեյնաքը Տիգրանի բռնած դիրքը համարել են «ճակատագրական սխալ», «դաշնակցային պարտականությունների մեջ թերացում», «քաղաքական կարճատեսություն», «պարզունակ լավատեսություն»։ Վերջին որակումը պատկանում է Հ. Մանանդյանին։

Ռ. Մանասերյանը ցույց է տալիս, որ Տիգրանի քաղաքական դիրքորոշման պատճառները խարսխված էին տերության մեջ տիրող իրավիճակում, կապված նրա հարավային իշխանություններից մեկի՝ Գորդիենայի (Կորդուքի) անջատողական ձգտումների, սիրիական Սելևկիա քաղաքի ընդվզման, սեփական արքունիքում ծայր առնող հակապետական խմորումների հետ և, որ կարևորն է, հակահայկական այն գործողությունների հետ, որոնք ծավալվել էին Փյունիկիայում և Հարավային Ասորիքում սելևկյան Կլեոպատրա-Սելենե թագուհու գլխավորությամբ։ Սանձահարելու համար այս բոլոր շարժումները Տիգրանը պետք է չեզոքություն պահպաներ, մանավանդ, որ Հռոմը միշտում էր Ասորիքում։ Այս նպակցությամբ շատ կարևոր են Գայուս Վերեսի գործի կապակցությամբ Կիկերոնի արտասանած ճառում պարունակված և Տիգրանի ժամանակակից քննադատների կողմից անտեսված տեղեկությունները Ասորիքում Հռոմի ունեցած կոնկրետ ակնկալությունների մասին։ Չեզոքության գնով պետք էր խաղաղեցնել տերությունը վերահաս պատերազմի նախօրյակին։

Դրախոսվող ուսումնասիրության նորություններից է 71—69 թթ. Հռոմի հանդեպ Տիգրանի դիրքորոշման լուսաբանումը։ Ապացուցվում է, որ մ. թ. ա. 71 թ. Տիգրանը նպատակ ուներ վերականգնել հռոմեացիների կողմից նվաճված Պոնտոսը և այդ նկատառումով ապաստան տվեց Միհրդատին (էջ 130—144)։ Այս առթիվ ուշագրավ են Կիկերոնից բերված մեջբերումները, որոնք բացահայտում են Տիգրանի դիրքորոշումը Միհրդատի նկատմամբ (էջ 134)։ Սակայն հռոմեացիներին հաջողվեց կանխել Տիգրանի ու Միհրդատի նախապատրաստվող պատերազմական ելույթը։

Տիգրանակերտի աղետին հաջորդեց Արածանիի հաղթանակը։ Մեծ ուշադրություն է հատկացվում կողմերի գործողությունների, Տիգրանի ռազմական ղեկավարման լուսաբանմանը։ Քննելով Ապպիանոսի տվյալները, հեղինակը հանգում է այն ուշագրավ եզրակացության, որ Արածանիի ճակատամարտից հետո մինչև Մծբինի անկումը, մ. թ. ա. 68 թ., ուշ աշնանը հայկական և հռոմեական զորքերի միջև տեղի է ունեցել նոր մեծ ճակատամարտ, որի ժամանակ Տիգրանին հաջողվեց շրջապատել հռոմեացիներին և նոր, ծանր պարտության մատնել նրանց այրուձին (էջ 180—187)։ Այսպիսով, հայկական բանակը հաջողությամբ ետ մղեց հռոմեական հարձակումը, սակայն Ասորիքի հետ ունիան քայքայված էր և տերությունը անհնարին էր վերականգնել։ 67—66 թթ. Պոմպեոսի զորքերի վերահաս հակահարձակման և պարթևների սպասվող ներխուժման վտանգի առաջ մնում էր պահպանել այն, ինչ բուն հայկական էր։ Բացահայտվում է Տիգրանի ճկուն դիվանագիտական գործելակերպը, որի առանձնահատուկ կողմն էր Հռոմի և

պարթևների միջև ծագող հակասությունների հմուտ օգտագործումը, իսկ այդ հանգամանքը պայմանավորեց Պոմպեոսի հետ, իսկ այնուհետև պարթև Արշակունիների հետ բանակցությունների բարեհաջող արդյունքը (էջ 212—221, 225—234)։ Հիմնավորված է երևում հեղինակի այն կարծիքը, որ Հռոմի հետ հաշտությունը չի եղել Հայաստանի ռազմական կապիտուլյացիա։ Այսպիսով, 68—64 թթ. ռազմադիվանագիտական համառ պայքարում, չնայած մեծ տերության քայքայմանը, Տիգրանը պահպանեց իր բնական սահմանների մեջ ամփոփված Հայաստանը, զերծ պահելով այն գերհզոր երկու հարևանների՝ Հռոմի և պարթևների նվաճողական նկրտումներից։

Աշխատությունը պարունակում է հարցեր, որոնք գուցե կարոտ են ավելի հանգամանալի պարզաբանման։ Ավելի մեծ ուշադրության են արժանի Տիգրանի արքունիքում մշակվող քաղաքական տեսությունները, նրանց նպատակամղվածությունը։ Մեր կարծիքով այդ տեսությունները ստորադասված էին առանցքային՝ տերության հզորության մեծապետական գաղափարին, որով տոգորված էին արքայի և նրա շրջապատի իղձերն ու ձգտումները։ Նրանց գաղափարական պատշաճ հիմնավորում տալու համար կոչված էր հելլենիստական ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում տարածում գտած աքեմենականության տեսությունը։ Այն պետք է հիմնավորեր այս կամ այն պետության գոյության իրավունքը, պաշտպաներ նրա մշակութային ինքնուրույնությունը, ապահովեր այս կամ այն տոհմի իշխելու կամ թագավորելու օրինականությունը, բաց նաև արդարացներ այս կամ այն պետության մեծապետական նկրտումները։ Տիգրան II-ի պատմության հետ առնչվող մի շարք մանրամասներ կարծես վկայում են, որ նա դիմել է Աքեմենյաններին, նրանց օրինակին, անգամ նրանց խորհրդանշաններին՝ իր իրագործվող քաղաքական միջոցառումներին գաղափարական հիմնավորում տալու ակնկալությամբ։

Ռ. Լ. Մանասերյանի «Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ» աշխատությունը ներդրում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև հելլենիստական ու հռոմեական Արևելքի պատմության ուսումնասիրության ասպարեզում և այն ցանկալի է հրատարակել նաև ռուսերեն։

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ